ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1024-Ա

«10» դեկտեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՆՉԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ը ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ազատուհի Եղիկի Շաբոյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին ներկայացված 2024 թվականի դեկտեմբերի 06-ի դիմումը: Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասի կետերի դրույթներով, հիմք ընդունելով Ձիթհանքով բնակավայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.04.1991 թվականի թիվ 1 որոշումից 26.09.2024 թվականին տրամադրված քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը տրամադրված 06.12.2024 թվականին, ժառանգական գործի համար թիվ 91/2024թվական, գրանցված գրանցամատյանում 5777 թվով և հաշվի առնելով որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի 6-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող 08-072-0035-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում.

որոշում եմ՝

1. Վերականգնել գույքային իրավունքները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնքի, Ձիթհանքով բնակավայրի 6-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող 08-072-0035-0003 կադաստրային ծածկագրով 0,31722 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և նրանում առկա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շինությունների նկատմամբ ճանաչել՝ Ազատուհի Եղիկի Շաբոյանի /ծնված 22.01.1957 թվականին, անձնագիր AU0355801, տրված 022-ի կողմից 15.07.2021 թվականին/, Երվանդ Կարապետի Երվանդյանի /ծնված

18.08.1985 թվականին,անձնագիր AT0299135, տրված 022-ի կողմից 06.11.2019 թվականին/, Ռոման Կարապետի Երվանդյանի /ծնված 25.08.1987 թվականին,անձնագիր AV0548947, տրված 022-ի կողմից 07.12.2022 թվականին/, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Հողամասում առկա են 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված շինություններ:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներին սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«10» դեկտեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ